Արձանագրություն թիվ 5

(նիստը կայացել է 2023 թվականի դեկտեմբերի 20-ին)

Նիստին մասնակցում էին Արմավիրի մարզի «Նորապատի միջնակարգ դպրոց» և «Մայիսյանի միջնակար գդպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիա լկառավարման մարմնի (խորհրդի) 14 անդամներից 11-ը:
Նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էին Նորապատի միջնակարգ դպրոցի տնօրեն Ն.Սահակյանը, Մայիսյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանը, հաշվապահներ Ա. Ռուբենյաննու Հ.Մարգարյանը:

Օրակարգում՝
1.Օրակարգի հաստատում

(զեկ.՝Մ.Հովհաննիսյան)

2. 2023թ. Ֆինանսական նախահաշվի քննարկում
(զեկ.՝Հ. Մարգարյան, Ա.Ռուբենյան)
3. Նախահաշվում հոդվածային փոփոխություն կատարելու մասին

(զեկ.՝Հ. Մարգարյան, Ա.Ռուբենյան)

Օրակարգում՝
1.Լսեցին- Կառավարման խորհրդի նախագահ Մ.Հովհաննիսյանին: Ներկայացրեց օրակարգը:

ՈՐՈՇՈՒՄԷ

Ընդունել միաձայն:

Օրակարգում՝
2. 2023թ. Ֆինանսական նախահաշվի քննարկում
(զեկ.՝Հ. Մարգարյան, Ա.Ռուբենյան)
Լսեցին – 2.Մայիսյանի և Նորապատի միջնակարգ դպրոցների հաշվապահներ Հ. Մարգարյանի և Ա.Ռուբենյանի տեղեկատվությունը 2023թ ֆինանսական նախահաշվի քննարկման վերաբերյալ: Մայիսյանի դպրոցի հաշվապահ Հ. Մարգարյանը նշեց, որ պետական բյուջեն նվազել է 148,6 հազ. ՀՀդրամ, իսկ տրանսպորտային ծախսերի փոխատուցման միջոցառման շրջանակներում տրամադրված գումարը նվազել է 24,6 հազ. ՀՀ դրամով:

Նորապատի միջնակարգ դպրոցի հաշվապահ Ա.Ռուբենյանը նշեց, որ.

Հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 13.12.2023 թվականի թիվ ՄՈ/787-Ա որոշումը՝ Նորապատի միջնակարգ դպրոցի բյուջեն պակասեցվել է 563.3 հազ. դրամով:Պակասեցվել է նաև ուսուցիչների պարտադիր վերապատրաստման համար նախատեսված գումարից 81.8 հազ. դրամ:

Ավելացվել է երթևեկող ուսուցիչների գումարը 21.3 հազ. դրամ, կամավոր ատեստավորվող և տարակարգ ստացած ուսուցիչների գումարները 474.2 հազ. դրամով:

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հավանություն տալ Մայիսյանի և Նորապատի միջնակարգ դպրոցների 2023 թ. Ֆինանսական նախահաշվին:

Օրակարգում՝
3. Նախահաշվում հոդվածային փոփոխություն կատարելու մասին

(զեկ.՝ Հ. Մարգարյան, Ա.Ռուբենյան)

Լսեցին-3. Մայիսյանի և Նորապատի միջնակարգ դպրոցների հաշվապահներ Հ.Մարգարյանի և Ա.Ռուբենյանի տեղեկատվությունը նախահաշվում հոդվածային փոփոխություն կատարելումասին: Հ. Մարգարյանը նշեց, որ ուսուցիչների պարտադիր ատեստավորման նպատակով հատկացված գումարը՝ 168,0 հազ. ՀՀ դրամը, անհրաժեշտ է բաշխել ըստ հոդվածների և կատարել հոդվածային հետևյալ փոփոխությունները՝

4111	հոդվածին ավելացնել	168,0 հազ.դրամ
5129	հոդվածին ավելացնել	70.0 հազ.դրամ
4212	հոդվածից նվազեցնել	218,6 հազ.դրամ
4229	հոդվածից նվազեցնել	24,6 հազ.դրամ

Ա. Ռուբենյանն առաջարկեց պետպատվերի նվազեցում և առանձին ծրագրերի ավելացում փոփոխությունները կատարել է հետևյալ հոդվածներում.

4111	հոդվածին ավելացնել	474.2 հազ.դրամ
4229	հոդվածին ավելացնել	21.3 հազ.դրամ
4112	հոդվածից նվազեցնել	563.3 հազ.դրամ
4233	հոդվածից նվազեցնել	81.8 հազ.դրամ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հավանություն տալ հոդվածային սույն փոփոխություններին:

2.Հանձնարարել տնօրեններին սույն որոշման քաղվածքը նախահաշվի հետ ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստի հաստատմանը:

Կառավարմանխորհրդինախագահ՝ Մ.Հովհաննիսյան